# ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

**1. Ընդհանուր տեղեկություններ պետական սեփականություն հանդիսացող գույքը (այսուհետ՝ տարածք) անհատույց օգտագործող՝ համայնքների, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների (այսուհետ՝ կազմակերպություն) մասին**

1.1. կազմակերպության լրիվ անվանումը՝ **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**,

1.2. կազմակերպության ձևը՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ,

1.3. կազմակերպության ստեղծման (վերակազմակերպման) ժամկետը՝ **17.04.2006թ**,

1.4. կազմակերպության գրանցման վկայականի համարը՝ **211.171.03929**,

1.5. գրանցման վայրը և տարեթիվը՝ **17.04.2006թ, ք.** ԵՐԵՎԱՆ,

1.6. գործունեության հիմնական ուղղությունները - ԾԱՆՐԱՄԱՐՏ ՄԱՐԶԱՁԵՎԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ,

1.7. գործունեության իրականացման վայրը (նստավայրը) ԵՐԵՎԱՆ, ԱԲՈՎՅԱՆ 9,

1.8. փոստային հասցեն - **0001,** ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 21,

1.9. տվյալներ (հեռախոս/ֆաքս, էլեկտրոնային հասցե - **+37498247254,** secretariat.wfa@gmail.com,

1.10. կազմակերպության գործունեության զարգացման (այդ թվում՝ նաև գույքի բարելավման, եթե նախատեսվում է) ծրագիրը հաստատվել է **«**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ իրավասու մարմնի 2025 թ. Մարտի 28 -ի N 1 որոշմամբ,

1.11. կազմակերպության ղեկավար՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, հեռ. **+37498244254**, կազմակերպության գլխավոր քարտուղար՝ ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ, հեռ. **+37498247254**:

**2. Կազմակերպության գործունեության համար հիմք հանդիսացող իրավական ակտերը և զարգացման ռազմավարական փաստաթղթերը**

2.1. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ** իր գործունեության և ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2024-2030 թվականների զարգացման ռազմավարությամբ, «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2.2. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ** իր գործունեության և ներկայացված ծրագրի իրականացման համար առաջնորդվում է՝ կազմակերպության կանոնադրության համաձայն, «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կանոնադրություն, 25.07.2017թվական :

2.3 **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ** աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և այդ ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով:

**3. Կազմակերպության գործունեության ոլորտը**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ** գործունեության ոլորտներն են՝

1) ֆիզիկական կուլտուրա և սպորտ,

2) ծանրամարտի զարգացում, մասսայականացում և հանրայնացում Հայաստանի Հանրապետությունում,

3) ծանրամարտի մարզիչ-մանկավարժների վերապատրաստման դասընթացների կազմակերպում

4) միջազգային կապերի ամրապնդում:

**4. Ծրագրի իրականացման համար առկա մարդկային ռեսուրսներն են**

4.1. **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** - նախագահ (գործադիր մարմնի ղեկավար),

4.2. **ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ** - գլխավոր քարտուղար

4.3. **ԱՆՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - հաշվապահ

4.4. **ՓԱՇԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ** - տղամարդկանց հավաքականի գլխավոր մարզիչ

4.5. ՀԱԿՈԲ ՓԻԼՈՍՅԱՆ - ավագ մարզիչ

4.6. ԱՐՏԱՇԵՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ – կանանց հավաքականի գլխավոր մարզիչ

4.7. ՄԵԼԻՔ ՂՈՒԿԱՍՅԱՆ – երիտասարդների հավաքականի ավագ մարզիչ

4.8 ԵՐՎԱՆԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ - պատանիների հավաքականի ավագ մարզիչ

**5. Կազմակերպության կողմից տարածքի օգտագործման ծրագրի նպատակը և խնդիրները**

5.1 սույն ծրագրի իրականացման նպատակը հանդիսանում է՝

1) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ծանրամարտ մարզաձևի զարգացմանը նպաստելը , ֆիզիկական կուլտուրայի և սպորտի առողջ ապրելակերպի քարոզումը ,

2) ծանրամարտ մարզաձևի բարձր որակավորում ունեցող մարզիկների, մարզիչների և մրցավարների պատրաստման համակարգումը ,

3) օլիմպիական խաղերին, Եվրոպայի և աշխարհի առաջնություններին, միջազգային մրցաշարերին , գավաթներին Հայաստանի ծանրամարտի հավաքական թիմերի մասնակցության ապահովումը,

4) ուսումնամարզական հավաքների, մարզչական և մրցավարական սեմինարների, գիտա-մեթոդական կոնֆերանսների և խորհրդակցությունների կազմակերպում և անցկացումը,

5) միջազգային և հանրապետական առաջնությունների կազմակերպումը և անցկացումը, ընթացքի վերահսկումը,

6) միջազգային մրցումներին , առաջնություններին հանրապետական հավաքական թիմերի մասնակցության ծրագրերի կազմումը, հավաքականի անդամների ցուցակների կազմումը, հավաքագրում հավաքական թիմերի պատվիրակության ղեկավարների հաշվետվությունների կազմումը և այլն :

5.2. սույն ծրագրի իրականացման ընթացքում լուծման ենթակա խնդիրներ են՝

1) տաղանդավոր մարզիկների վաղ հայտնաբերում և վերապատրաստում,

2) տեղական մրցաշարերի մակարդակի բարձրացում՝ միջազգային մրցակցությանը նախապատրաստվելու համար ,

3) միջազգային ֆեդերացիաների հետ կապերի ամրապնդում,

4) կոշտ վերահսկողություն դոպինգի դեմ պայքարում,

5) մազիկների և մարզիչների համար կրթական ծրագրերի իրականացում՝ առողջ մարզման կարևորության թեմայով և այլն:

**6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները և դրանց աղբյուրները**

6.1. սույն ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են.

1) դրամաշնորհներ
2) հովանավորչական ներդրումներ, տարեկան՝ 30.200.000 (երեսուն միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ , որից՝

   2.1. 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամը , դրամական մրցանակներ նախատեսված մարզիկներին, ծառայությունների համար նախատեսված վճարներ, ըստ պայմանագրի

   2.2. 10.000.000 (տաս միլիոն) ՀՀ դրամը ,նախատեսված է գործուղումների, վերապատրաստումների, մրցաշարերի կազմակերպման և այլ ծախսերի համար.

   2.3. 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը , նախատեսված է տարածքի պահպանմանն ուղղված ծախսերի համար

**7. Ծրագրի իրականացման և տարածքի օգտագործման ժամկետները**

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 3 (երեք) տարիների ընթացքում:

**8. Ծրագրի իրականացման համար նախատեսվող միջոցառումները**

8.1. սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 3 (երեք) տարիներին **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ** նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

Հայաստանի ծանրամարտի հավաքական թիմերի թվով 60 (վաթսուն) ուսումնամարզական հավաք,

Հայաստանի ծանրամարտի առաջնություններ (տարբեր տարիքային խմբերի),

ծանրամարտի մարզչական և մրցավարական սեմինարներ՝ թվով 6 (վեց ),

Հայաստանի ծանրամարտի կանանց և տղամարդկանց հավաքական թիմերի մասնակցությունը 2028 թվականի ամառային օլիմպիական խաղերին, 2027 թվականի Եվրոպական խաղերին, 2027 թվականի Ֆրանկոֆոնյան խաղերին, Եվրոպայի և աշխարհի առաջնություններին,

Հայաստանի ծանրամարտի երիտասարդների և աղջիկների հավաքական թիմերի մասնակցությունը Եվրոպայի երիտասարդական, մինչև 23 տարեկանների և աշխարհի երիտասարդական առաջնություններին,

Հայաստանի ծանրամարտի երիտասարդների և աղջիկների հավաքական թիմերի մասնակցությունը Եվրոպայի երիտասարդական և աշխարհի երիտասարդական առաջնություններին,

Հայաստանի ծանրամարտի պատանիների և աղջիկների հավաքական թիմերի մասնակցությունը Եվրոպայի պատանիների և աշխարհի պատանիների առաջնություններին,

8.2. սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է, որ կազմակերպությունը կապահովի գործընթացների բարելավում, արդյունավետության աճ, ինչպես նաև նոր հնարավորություններ կստեղծվեն բոլոր մասնակիցների համար՝ նպաստելով տնտեսության զարգացմանը և սոցիալական բարեկեցության բարձրացմանը,

8.3. ծրագրի իրականացման ընթացքում իրականացվող բաժանելի բարելավումները (ձեռք բերվող գույքը) չեն համարվում տարածքի բարելավմանն ուղղված միջոցներ և համարվում են կազմակերպության սեփականությունը:

## 9. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ կազմակերպությունը ծրագրային ժամանակահատվածում կապահովի՝

9.1. Մարզիկների մրցունակության բարձրացում

- Ծրագրի միջոցով նախատեսվում է բարձրացնել Հայաստանի առաջնակարգ մարզիկների մարզական պատրաստվածությունը՝ ապահովելով նրանց մասնակցությունը միջազգային մրցումներին և մրցանակներ շահելու հնարավորություններ:
- Կազմակերպվում են մարզման հատուկ դասընթացներ և խորացված պատրաստություն, որոնք ուղղված են երիտասարդ և միջին տարիքի մարզիկների մրցունակության բարձրացմանը:
- Նպատակ է դրվում ավելացնել Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների թիվը միջազգային ասպարեզում՝ մասնակցելով Եվրոպայի և աշխարհի առաջնություններին, Օլիմպիական խաղերին:

9.2. Ֆեդերացիայի կառավարման արդյունավետության բարձրացում

- Ֆեդերացիայի կառավարման համակարգի բարելավում՝ արդյունավետ պլանավորում և կազմակերպում, ինչպես նաև ավելի մեծ թվով մարզական միջոցառումների ու մրցաշարերի կազմակերպում Հայաստանի տարածքում:
- Նոր մարզիկների հայտնաբերման և պատրաստման գործընթացի կայունացում՝ սկսած դպրոցական մարզիկներից մինչև մեծահասակներ:

9.3. Միջազգային համագործակցության ամրապնդում

- Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիան կհաստատի նոր կապեր միջազգային ֆեդերացիաների հետ, որը կնպաստի Հայաստան մուտք գործելուն և աշխարհում Հայաստանի հեղինակությունը բարձրացնելուն:
- Մարզիկները կունենան ավելի շատ միջազգային փորձ և կրթական հնարավորություններ՝ զարգացնելով իրենց գիտելիքները և մոտեցումները:

9.4. Մարզական կրթության և հանրային իրազեկման բարձրացում

- Շարունակական աշխատանքներ կընթանան հանրության շրջանում՝ մարզական գործունեությունը խրախուսելու և ծանրամարտի մասին իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ, մասնավորապես դպրոցներում և համայնքներում:
- Ծանրամարտի տարածումը կբարձրացնի սպորտի մասշտաբը Հայաստանի Հանրապետությունում ՝ մասնակիցների աճի և մարզական ենթակառուցվածքների ավելի լայն կիրառման միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս.ԳԱՍՊԱՐՅԱՆ